Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (10 դասաժամ) թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ (դիպլոմ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ):
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն (Ձև 4):
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար 3x4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության օրվանից մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00 -ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Արարատի մարզի Սայաթ-Նովայի միջնակարգ դպրոցում՝ սեպտեմբերի 16-ին ժամը 14:00-ին: